# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ 19.01.2026թ. ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

*27-ը ապրիլի 2026թ.* *ք. Երևան*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ՄԽ-Ո-08

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԸՆՏՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 10.2-րդ հոդվածի 20-րդ մասով, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության՝ 19.01.2026թ. ձևավորված մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) թիվ ՄԽ-Ո-04 որոշմամբ հաստատված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի» (այսուհետ՝ Կարգ) դրույթներով՝ Խորհուրդը՝ Արուսյակ Ջուլհակյանի, Արթուր Հովսեփյանի, Արուս Հայրապետյանի, Հարութ Ակլունցի և Անդրանիկ Եղոյանի կազմով՝

## ՈՐՈՇԵՑ

1. Ամփոփել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու նպատակով 2026 թվականի ապրիլի 27-ին անցկացված մրցույթի արդյունքները (այսուհետ՝ Մրցույթ)՝ արձանագրելով, որ

Մրցույթի հավակնորդը չի հաղթահարել հարցազրույցի փուլի համար Կարգով նախատեսված անցողիկ շեմը:

2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի արդյունքներով հաղթող չճանաչել:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի նախագահին:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂՈՅԱՆ